



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍՏԱԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ



**OPEN SOCIETY
FOUNDATIONS**

ԶԵԿՈՒՅՑ

2013 թ-ի ձմեռային եւ 2014 թ-ի ամառային զորակոչերի
ընթացքում զորակոչիկների իրավունքների
վիճակի մասին

ՎԱՆԱԶՈՐ

2014

Ձեկույցը պատրաստել են՝

Արթուր Մաքունց

Արմինե Մադիկյան

Նազելի Մովսեսյան

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կիրառված մեթոդալոգիան.....3

Զորակոչի գործընթացը, նախագորակոչային տարիքի անձանց եւ գորակոչիկների առողջական վիճակի զննությունը կարգավորող օրենսդրությունը.....3

Զինձառայությանը պիտանիության հարցի կարգավորումը եւ իրավական դաշտի թերությունները.....5

2013 թ-ի ձմեռային եւ 2014 թ-ի ամառային գորակոչների ընթացքում արձանագրված մարդու իրավունքների խախտումների նկարագրությունը
Ընդհանուր տեղեկություններ.....12

Եզրահանգումներ.....16

Առաջարկություններ.....18

ՀԱՎԵԼՎԱԾ



Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից ներկայացվում է հերթական գորակոչերի՝ 2013 թ-ի ձմեռային¹ (2013 թ-ի դեկտեմբեր – 2014 թ-ի հունվար) եւ 2014 թ-ի ամառային² (մայիս-հուլիս ամիսների), ընթացքում արձանագրված մարդու իրավունքների խախտումները:

Զեկույցում ամփոփված տեղեկությունները ստացվել են ՀՀ 4 մարզերից եւ Երեւան քաղաքից կազմակերպություն դիմած 26 քաղաքացիներից՝ գորակոչիկներից եւ նրանց հարազատներից, ինչպէս նաեւ ՀՀ ՊՆ-ից կազմակերպության հարցումների պատասխանների միջոցով:

2013 թ-ի ձմեռային եւ 2014 թ-ի ամառային գորակոչերի ընթացքում մարդու իրավունքների խախտումները ամբողջությամբ պայմանավորված են ոչ պատշաճ բժշկական զննությամբ, որի հետեւանքով առողջական լուրջ խնդիրներ ունեցող քաղաքացիները գորակոչվում են պարտադիր զինվորական ծառայության:

Գտնում ենք, որ նման արատավոր գործելակերպը պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության որդեգրած քաղաքականությամբ, որի մասին հայտարարել է ՀՀ պաշտպանության նախարարը 2013 թ-ի դեկտեմբերի 12-ին ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Մարդու իրավունքները զինված ուժերում» թեմայով խորհրդարանական լսումների ընթացքում, այն է. «առողջական խնդիրների առկայությամբ գորակոչիկները պետք է գորակոչվեն անմիջապէս զինվորական հոսպիտալներ, այնտեղ բուժում անցնելուց հետո՝ զորամասեր»:

Զեկույցում ներկայացրել ենք մինչ այժմ լուծում չստացած եւ բազմիցս բարձրաձայնված համակարգային խնդիրները եւ գորակոչիկների իրավունքների խախտմանը հանգեցնող կոնկրետ խնդիրների մասին տեղեկատվությունը:

Անդրադարձել ենք նաեւ գորակոչի կազմակերպման վերաբերյալ օրենսդրությանը եւ գնահատել ենք թերությունների, բացերի ազդեցությունը գորակոչիկների իրավունքների խախտման տեսանկյունից:

¹<http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=87088> ; <http://www.president.am/hy/decrees/item/1014/>
<http://yerevannews.am/?p=16792&l=am/hramanagir%D5%9D+dzmerayin+zorakochivo%D6%82+zoracrman+masin>
² <http://www.Iragir.am/index/arm/0/country/view/98450>; <http://www.president.am/hy/decrees/item/1150/>
<https://www.e-gov.am/gov-decrees/item/24261/>

1. Կիրառված մեթոդաբան

Զեկույցում ներկայացված տեղեկատվության աղբյուրներն են.

1. գորակոչիկները եւ նրանց հարազատները, ՀՀ պաշտպանական գերատեսչությունը
2. գորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթղթերը
3. գանգվածային լրատվության միջոցները:

Զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթղթերը ուսումնասիրվել են բժիշկ-փորձագետի կողմից, որի եզրակացության հիման վրա կազմվել են պաշտպանության նախարարությանը հասցեագրվող գրությունները: Համեմատվել են առողջության վերաբերյալ բժշկական հանձնաժողովների կողմից տրամադրված եզրակացությունները գորակոչիկի առողջության վերաբերյալ քաղաքացիական բժշկական հաստատությունների կողմից առկա փաստաթղթերի եւ ծնողների կողմից հաղորդված տվյալների հետ:

Զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ տվյալները համեմատվել են ՀՀ ՊՆ 410 հրամանով սահմանված հիվանդությունների ցանկի հետ եւ գնահատվել է զինձառայությանը գորակոչիկի պիտանիության օրինականությունը:

2. Զորակոչի գործընթացը, նախագորակոչային տարիքի անձանց եւ գորակոչիկների առողջական վիճակի գնությունը կարգավորող օրենսդրությունը

Զորակոչի գործընթացը եւ գորակոչիկների բժշկական գնության անցկացումը կարգավորող նորմերը ամրագրված են հետեւյալ իրավական ակտերում:



«Ջինապարտության մասին» ՀՀ օրենք³ ընդունված 1996 թ. սեպտեմբերի 16-ին: Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստությունը, պարտադիր զինվորական ծառայության գորակոչը, զինվորական ծառայությունը, պահեստագործում պատրաստությունը կազմակերպելու և անցկացնելու հետ կապված հարաբերությունները, սահմանում է բժշկական զննության անցկացումը կարգավորող նորմերը, պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ազատման եւ տարկետում ստանալու հիմքերը:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենք⁴ ընդունված 2008 թ. նոյեմբերի 27-ին: Համաձայն սույն օրենքի 13-րդ հոդվածի՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հաստատում է պարտադիր զինվորական ծառայության գորակոչի եւ վարժական հավաքների անցկացման, զինապարտների բժշկական եւ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգերը: Համաձայն օրենքի 14-րդ հոդվածի՝ զինված ուժերի գլխավոր շտաբը իրականացնում է պարտադիր զինվորական ծառայության, գորակոչի և վարժական հավաքների անցկացումը, ինչպես նաև գորահավաքային ռեսուրսների հաշվառումը և հավաքագրումը, իրականացնում է քաղաքացիների զինվորական ծառայության նախապատրաստությունը և զինվորական հաշվառումը:

2013 թվականի հունիսի 11-ի ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 410 հրամանը զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու և ՀՀ ՊՆ 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին /այսուհետ ՀՀ ՊՆ 410 հրաման/:

ՀՀ ՊՆ 410 հրամանով սահմանվում են.

³ <http://www.arlis.am/>

⁴ Տե՛ս նույն աղբյուրը

- քաղաքացիների բժշկական փորձաքննությունը՝ նրանց գորակոչային տեղամասերին կցագրելու եվ պարտադիր զինվորական ծառայության գորակոչելու ժամանակ,
- հիվանդությունների եւ ֆիզիկական թերությունների ցանկը, որոնց հիման վրա որոշվում է կցագրման, գորակոչի, զինվորական ծառայության անցնելու, վարժական հավաքների, հրամանատարային կամ շտաբային զինվորական վարժանքների և գորավարժությունների (գորախաղերի) ժամանակ քաղաքացիների պիտանիությունը զինվորական ծառայությանը՝ ըստ նրանց առողջական վիճակի և ֆիզիկական զարգացման տվյալների:

3. Զինծառայությանը պիտանիության հարցի կարգավորումը եւ իրավական դաշտի թերությունները

ՀՀ ՊՆ 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175-ն ուժը կորցրած հրամանով /այսուհետ ՀՀ ՊՆ 175 հրաման/ սահմանվում էր շարային, ոչ շարային և սահմանափակումներով ծառայության տեսակներ՝ ըստ գորակոչիկի առողջական վիճակի: ՀՀ ՊՆ 410 հրամանով սահմանվեց ըստ գորակոչիկի առողջական վիճակի միայն շարային և սահմանափակումներով ծառայության տեսակները:

Ինչպես բազմիցս անդրադարձել ենք նախորդ զեկույցներում, որեւէ իրավական ակտով, ինչպես նախկին հրամանով, սահմանված չէր շարային, ոչ շարային և սահմանափակումներով զինվորական ծառայության շրջանակը, այնպես էլ ներկայումս որեւէ իրավական ակտով սահմանված չէ սահմանափակումներով զինծառայության ծավալը:

Նշենք, որ շարային եւ եւ «ոչ շարային» ծառայությունը կարգավորող նորմատիվ ակտի վերաբերյալ մեր հարցումներին ՀՀ ՊՆ-ն տրամադրել էր իրարամերժ պատասխաններ:⁵

⁵ ԶԵԿՈՒՅՑ 2013 թ. գարնանային գորակոչի ընթացքում գորակոչի գործընթացի եւ գորակոչիկների իրավունքների վիճակի մասին, էջ 4-5, ՀԱՎԵԼՎԱԾ 1.1-1.5



Նմանապես, բացակայում է կամ մատչելի չէ նոր ՀՀ ՊՆ 410 հրամանով սահմանափակումներով զինծառայությունը կարգավորող իրավական ակտը: Այս հարցի կարգավորումը մշտապես կարելուվում է կազմակերպության կողմից, քանի որ ինչպես վկայում են քաղաքացիները, որոնք ճանաչվել են «պիտանի ոչ շարային» կամ «շարային՝ սահմանափակումներով» ծառայությանը, իրականում գտնվել եւ գտնվում են շարային ծառայության մեջ, որը հանգեցնում է ոչ միայն նրանց առողջական վիճակի վատթարացմանը, այլև զինվորական պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը, կանոնադրային հարաբերությունների խախտմանը, իսկ առանձին դեպքերում նույնիսկ զինծառայողի մահվանը:

ՀՀ ՊՆ 410 հրամանով սահմանված նոր կարգով ընդհանրապես հանվեց «ոչ շարային ծառայությունը»: Պետք է ենթադրել, որ ոչ շարային ծառայությանը պիտանի ճանաչված զորակոչիկը ճանաչվում է պիտանի սահմանափակումներով զինվորական ծառայությանը: Այսինքն՝ նախկին կարգով սահմանված ոչ շարային եւ սահմանափակումներով զինծառայության տեսակները փոխարինվեց սահմանափակումներով զինծառայության տեսակով, որը հանդիսանում է լուրջ առողջական խնդիրներ ունեցող նախկինում ոչ շարային ծառայությանը պիտանի ճանաչված անձի վիճակի վատթարացում:

ՀՀ ՊՆ 410 հրամանով հստակ սահմանված չեն նաեւ մի շարք հիվանդությունների ծանրության աստիճանների չափանիշները, ինչի հետեւանքով նույն ծանրությամբ հիվանդությունը կարող է դիտարկվել որպես թե՛ ծառայությունից ազատման, թե՛ ծառայությանը պիտանի ճանաչելու հիմք: Իրավական նորմերի նման անհստակությունը հանդիսանում է իրավական որոշակիության սկզբունքի խախտում եւ կարող է հանդիսանալ սուբյեկտիվ, հայեցողական մոտեցումների եւ կոռուպցիոն ռիսկերի դրսեւորումների պատճառ:

Բացի այդ, **հիվանդությունների ախտորոշումները շատ դեպքերում չեն համապատասխանում հիվանդությունների միջազգային դասակարգմանը:** Համաշխարհային առողջապահական կազմակերպությունը (ՀԱԿ) մշակել է Հիվանդությունների միջազգային դասակարգումը (ՀՄԴ), որը ներառում է



հիվանդությունների դասակարգումը եւ անվանումների տերմինաբանությունը, որով պետք է առաջնորդվեն ՀԱԿ անդամ պետությունների բժիշկները հիվանդություններ ախտորոշելիս: Ներկայումս կիրառվում է Հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայումը (International Classification of Disease 10, ICD-10): Հիվանդությունների միջազգային դասակարգումը անընդհատ թարմացվող առցանց տեղեկատվական համակարգ է (www.apps.who.int/classifications/icd10/): Հայաստանի Հանրապետությունը ՀԱԿ անդամ է 1992 թվականից: Հետեւաբար, հիվանդությունների ախտորոշումները եւ ախտորոշված հիվանդությունների անվանակարգը պետք է համապատասխանեն ՀԱԿ-ի կողմից մշակված ՀՄԴ 10-ին՝ հիվանդության կոդի հստակ նշումով: Յուրաքանչյուր առանձին հիվանդության միավորը պետք է առանձին կոդավորվի: Դասակարգչի դրույթները ենթակա են կիրառման շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների կողմից, որոնք իրականացնում են հիվանդությունների ախտորոշման և առողջապահական այլ գործընթացներ, ինչպես նաև վիճակագրական գործունեություն:

Կազմակերպություն դիմած գորակոչիկների եւ զինծառայողների բժշկական թղթերն ուսումնասիրելիս հանդիպում ենք այնպիսի ախտորոշումների, որոնք չեն համապատասխանում ՀՄԴ 10-ին, կոդավորված չեն, անհասկանալի են:

Օրինակ, Հավելված 1-ի 5-րդ դեպքում (Վ. Հ.) ախտորոշվել է «ձախ երիկամի կիստա»: «Ձախ երիկամի կիստա» ախտորոշումը թերի է: Ըստ ՀՄԴ 10-ի ախտորոշումը պետք է կատարվի հետեւայալ ձեւաչափով՝ N 28.1 Cyst (acquired)(multiple)(solitary) of kidney՝ նշել տեղեկություն՝ այն բնածին է, թե ձեռքբերովի, բազմաթիվ է, թե սոլիտար (միայնակ), ինչպես նաև չափսերը: Հետեւաբար, ճիշտ ախտորոշումը կլինէր՝ «N28.1 Ձախ երիկամի միայնակ, ձեռքբերովի կիստա»: Մեկ այլ դեպքում ախտորոշվել է «Ստորին եւ վերին վերջույթների անգիոտրոֆոններոզ»: «Անգիոտրոֆոններոզ» ախտորոշում եւ տերմին ՀՄԴ 10-ում գոյություն չունի:

Բացակայում են Ֆունկցիայի խանգարման աստիճանը գնահատելու չափանիշները: Շատ դեպքերում որեւէ հիվանդություն ախտորոշելուց հետո



գորակոչիկների պիտանելիության հարցը որոշվում է՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, թե տվյալ հիվանդությունը որքանով է հանգեցնում օրգանի կամ մարմնամասի ֆունկցիայի խանգարմանը եւ որքանով է խոչընդոտում զինվորական ծառայությանը: Որպես կանոն, Հրամանում տարբերակված է ֆունկցիայի աննշան, չափավոր եւ արտահայտված խանգարում, որոնք համապատասխանաբար ենթադրում են, որ գորակոչիկը պիտանի չէ զինվորական ծառայությանը, պիտանի է սահմանափակումով կամ պիտանի չէ: Սակայն, Հրամանում բացակայում են ֆունկցիայի խանգարման աստիճանը գնահատող չափանիշները, եւ ֆունկցիայի խանգարումը գնահատվում է բժշկի եւ ԿԲՀ անդամների սուբյեկտիվ կարծիքի հիման վրա:

ՀՀ ՊՆ 410 Հրամանի 8-րդ հոդվածը ներառում է անձի և վարքի խանգարումները, ներառյալ՝ անձի սպեցիֆիկ և խառը խանգարումները, սովորությունների և հակումների խանգարումները, սեռական նույնացման խանգարումները, սեռական նախընտրության խանգարումները, սեռական զարգացման և կողմնորոշման հետ կապված հոգեբանական և վարքային խանգարումները: Սակայն Հրամանով կարգավորված չէ հոմոսեքսուալ գորակոչիկների պիտանելիության հարցը: Հոմոսեքսուալիզմը հիվանդություն չի համարվում: Այն 1992 թվականին հանվել է ՀՄԴ 10-ից եւ համարվում է նորմալ սեռական կողմնորոշման տարատեսակ: Հետեւաբար, չի պատկանում սույն կետով նախատեսված վիճակների ցանկին, եւ ըստ էության հոմոսեքսուալ գորակոչիկները պիտանի են զինվորական ծառայությանը: Զինվորական ծառայությունից ազատելու նպատակով հոմոսեքսուալ գորակոչիկներին ախտորոշում են այլ հոգեկան խանգարումներ, որոնք գորակոչիկների մոտ բացակայում են, ինչը մարդու իրավունքներ կոպիտ ոտանահարում է: Ցանկալի է առանձին դրույթով կարգավորվի նաեւ նրանց պիտանելիության հարցը:

Այսպիսով, ՀՀ ՊՆ 410 հրամանը բովանդակային առումով իրականում հանգեցնում է գորակոչիկների իրավունքների խախտմանը եւ զինվորական

ծառայությանը նրանց պիտանիության վերաբերյալ որոշումների ընտրողական ընդունմանը:

ՀՀ ՊՆ 410 հրամանով վերստին չի լուծվել մի քանի հիվանդությունների առկայության պայմաններում զինվորական ծառայությանը պիտանիության հարցը:

«Մարդու իրավունքների վիճակը ՀՀ զինված ուժերում 2013 թ-ին»⁶ զեկույցում նշել էինք, որ գարնանային զորակոչի մի մասում /մայիս-հուլիս ամիսներին/ կիրառվել է ՀՀ ՊՆ 175 հրամանը՝ մինչև 2013 թ-ի հունիսի 11-ը, իսկ մյուս մասում 2013 թ-ի հունիսի 11-ին ուժի մեջ մտած ՀՀ ՊՆ 410 հրամանը: Այսպիսով, զորակոչիկների մի մասին բժշկական փորձաքննության են ենթարկել ըստ ՀՀ ՊՆ 175, իսկ մյուս մասին՝ ըստ ՀՀ ՊՆ 410 հրամանի: Ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկացրեց, որ «ՀՀ ՊՆ 410 հրամանը հաստատվել է 08.04.2013 թ-ին, գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարությունում 13.05.2013 թ-ին, իսկ զորակոչը անց է կացվել հունիսի 11-ից: Այսինքն՝ 2013 թ-ի գարնանային զորակոչի ժամանակ բոլոր զորակոչիկները փորձաքննվել են եւ զինվորական ծառայության մասին որոշումները կայացվել են 08.04.2013 թ-ի ՀՀ ՊՆ 410 հրամանի համաձայն»: Այսինքն պաշտպանության նախարարությունը գտնում է, որ 2013 թ-ի գարնանային զորակոչը կազմակերպվել է միան 410 հրամանով:

Սակայն կազմակերպության տվյալները վկայում են, որ իրականում որոշ զորակոչիկներ եւ զինծառայողներ նույն 2013 թ-ի գարնանային զորակոչի ընթացքում փորձաքննվել են եւ՝ 175, եւ՝ 410 հրամաններով: Ավելին, նրանցից ոմանք փորձաքննվել են նոր՝ ՀՀ ՊՆ 410 հրամանով, այն ժամանակ, երբ այն դեռ ուժի մեջ չէր մտել, մասնավորապես.

1. զորակոչիկ Ա. Բ-ն փորձաքննվել է ՀՀ ՊՆ 410 հրամանով 2013 թ-ի փետրվարի 25-ից մինչև հունիսի 1-ը
2. զորակոչիկ Մ. Բ-ն փորձաքննվել է ՀՀ ՊՆ 410 հրամանով 2013 թ-ի ապրիլի 30-ից մինչև մայիսի 20-ը

⁶ <http://hcav.am/wp-content/uploads/2014/05/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%812.pdf>



3. գորակոչիկ Մ. Ղ-ն փորձաքննվել է ՀՀ ՊՆ 410 հրամանով 2013 թ-ի մայիսի 2 -ից մինչև հունիսի 7-ը
4. զինճառայող Ս. Թ-ն փորձաքննվել է ՀՀ ՊՆ 175 հրամանով 2013 թ-ի մարտի 12-ից մայիսի 2-ը եւ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայությանը 2013 թ-ի մայիսի 8-ի ԿՌԲՀ որոշմամբ
5. գորակոչիկ Ս. Ք-ն փորձաքննվել է 10.04-12.04.2013 թ-ին եւ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայությանը ՀՀ ՊՆ 410 հրամանով 2013 թ-ի մայիսի 23-ի ԿԲՀ որոշմամբ
6. գորակոչիկ Գ. Զ-ն փորձաքննվել է 02.04-01.06.2013 թ-ին եւ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայությանը ՀՀ ՊՆ 410 հրամանով 2013 թ-ի մայիսի 23-ի ԿԲՀ որոշմամբ
7. գորակոչիկ Ա. Ա-ն փորձաքննվել է 02.04-22.04.2013 թ-ին եւ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայությանը ՀՀ ՊՆ 410 հրամանով 2013 թ-ի մայիսի 30-ի ԿԲՀ որոշմամբ
8. գորակոչիկ Գ. Մ-ն փորձաքննվել է ՀՀ ՊՆ 410 հրամանով 2013 թ-ի ապրիլի 2-ից մինչև ապրիլի 9-ը

Այսինքն, կարող ենք արձանագրել, որ գորակոչիկները փորձաքննվել եւ զինճառայությանը պիտանի կամ ոչ պիտանի են ճանաչվել դեռեւս գոյություն չունեցող եւ ուժի մեջ չմտած իրավական ակտով, որը հանդիսանում է ոչ միայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 46-ով⁷ սահմանված դրույթների խախտում, այլեւ վերոհիշյալ քաղաքացիների իրավունքների կոպիտ խախտում:

⁷ 1. Իրավական ակտերն ուժի մեջ կարող են մտնել միայն ընդունումից հետո, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև ընդունման պահից:
2. Նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում նախատեսված ժամկետներում:
Նորմատիվ իրավական ակտերը կարող են ուժի մեջ մտնել ոչ շուտ, քան սույն օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե սույն օրենքով ուղղակի այլ բան նախատեսված չէ:
Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող և փոփոխող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ փոփոխող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ

Միաժամանակ նշենք, որ կազմակերպությունը թե՛ ՀՀ Պաշտպանության նախարարությանը, թե՛ ՀՀ ԱԺ Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովին բազմիցս ներկայացրել է հետեւյալ մոտեցումը. ՀՀ ՊՆ նախկին 175 եւ ներկայիս 410 հրամաններով սահմանվում են նորմեր, որոնք սահմանափակում են քաղաքացիների իրավունքները, հետեւաբար դրանք պետք է ամրագրվեն ոչ թե ենթաօրենսդրական իրավական ակտով, այլ միայն օրենքով (ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1, 2-րդ մասեր, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մաս):

«Մարդու իրավունքների վիճակը ՀՀ զինված ուժերում 2013 թ-ին» զեկույցում անդրադարձել ենք այս հարցին եւս, սակայն զեկույցի վերաբերյալ մեկնաբանություններում⁸ ՀՀ պաշտպանության նախարարությունը, անդրադառնալով այս հարցին, գտնում է, որ հրամանը օրենքով փոխելու անհրաժեշտությունը գտնում են ոչ նպատակահարմար, քանի որ այն իրենից ներկայացնում է բժշկական փաստաթուղթ, եւ չափորոշիչների փոփոխությունների դեպքում հնարավոր չէ արագ արձագանքել եւ կատարել անհրաժեշտ փոփոխությունները:

ՀՀ ՊՆ 410 հրամանը ընդունվել է ղեկավարվելով «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջների համաձայն՝ զինապարտների ու զինձառայողների առողջական վիճակի փորձաքննության գործընթացը կանոնակարգելու նպատակով:

Ճիշտ է՝ հրամանը ընդունվել է իրավական նորմերի ենթակայության սկզբունքի համաձայն, սակայն այն պարունակում է նորմեր, որոնք ուղղակիորեն կարգավորում են գորակոչիկի եւ զինձառայողի իրավունքների

փոփոխող, ինչպես նաև դրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող նորմատիվիրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, եթե այդ նորմատիվ իրավական ակտերով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ կամ եթե սույն օրենքով ուղղակի այլ բան նախատեսված չէ:

3. Սույն օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած նորմատիվ իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն (իրավական հետևանքներ չեն առաջացնում և իրավահարաբերությունների կարգավորման համար իրավական հիմք չեն):

⁸ http://hcav.am/wp-content/uploads/2014/10/M_2014-04.06_202-1.pdf

սահմանափակումները, մասնավորապես՝ շարային եւ սահմանափակումներով զինձառայության տեսակները: Ըստ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1, 2-րդ մասերի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի՝ բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու **պայմանները և կարգը**, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց **պարտականությունները**: Այսինքն՝ ՀՀ ՊՆ 410 հրամանը սահմանում է զինապարտների և զինձառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը, որը վերաբերում է նրանց իրավունքներին, զինվորական ծառայության պիտանիության տեսակը, որը սահմանում է պարտականությունների շրջանակը: Այսպիսով, հրամանը ուղղակիորեն ամրագրում է կարգավորումներ, որոնք կարող են սահմանվել բացառապես օրենքի ուժով: Հետեւաբար, ՀՀ պաշտպանության նախարարության վերը նշած հիմնավորումը հակասում է եւ՝ ՀՀ սահմանադրության, եւ՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի սկզբունքներին:

4. 2013 թ-ի ձմեռային եւ 2014 թ-ի ամառային զորակոչերի ընթացքում արձանագրված մարդու իրավունքների խախտումների նկարագրությունը

Ընդհանուր տեղեկություններ

2013 թ-ի ձմեռային եւ 2014 թ-ի ամառային զորակոչերի ընթացքում իրավական աջակցություն ստանալու նպատակով կազմակերպություն է դիմել 26 զորակոչիկ Հայաստանի տարբեր մարզերից՝ Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Վայոց Ձորի մարզերից եւ Երեւան քաղաքից:

23 զորակոչիկի խնդիրը կապված է եղել ոչ պատշաճ բժշկական զննության հետ, 2-ը՝ զինվորական ծառայությունից տարկետում ստանալու հիմքերի պարզաբանման, 1-ը՝ ուսումը շարունակելու նպատակով տարկետում տրամադրելու հետ:



Ինչպես նկատում ենք, գորակոչիկների խնդիրների գերակշիռ մասը վերաբերում է առողջական վիճակի հետազոտման հետ կապված խնդիրներին եւ զինվորական ծառայությանը նրանց պիտանիության հարցի լուծմանը:

26 հոգուց 11 հոգի բավարարվել է բժշկական հետազոտության կարգի /9 հոգի/ եւ ընտանեկան դրությունից ելնելով տարկետման կամ ազատման հիմքի /2 հոգի/ վերաբերյալ բանավոր խորհրդատվությամբ: Մնացած 15 հոգու վերաբերյալ պատրաստվել է 19 գրություն /1 անձի վերաբերյալ 3 գրություն, 2-ի վերաբերյալ 2-ական գրություն/:

19 գրություններից 18-ը հասցեագրված են եղել ՀՀ պաշտպանության նախարարությանը զինվորական ծառայությանը առողջական խնդիրներով պիտանի ճանաչելու օրինականությունը վերանայելու եւ կրկնակի փորձաքննություններ նշանակելու վերաբերյալ, 1-ը` ՀՀ վարչապետին` ուսումը շարունակելու նպատակով տարկետում տրամադրելու վերաբերյալ:

Նշված 19 գրություններից միայն 16-ի պատասխաններն են ստացվել օրենքով սահմանված ժամկետներում⁹: 3-ի դեպքում պատասխանները ստացվել են մինչեւ 10 օր ուշացումով:

Բացի ժամկետներից, հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացվող պատասխանների բովանդակությանը: Որպես կանոն, դրանցում ներկայացվում են ոչ թե բարձրացված խնդրի վերաբերյալ իրականացված գործողությունների, հետազոտությունների ներկայացումը, այլ մեր գրության մեջ արձանագրված փաստերի վերարտադրությունը եւ կայացված որոշման ձեւակերպումը:

2013 թ-ի ձմեռային եւ 2014 թ-ի ամառային գորակոչերի ընթացքում Կազմակերպություն դիմած եւ գրավոր ընթացակարգով խորհրդատվություն ստացած գորակոչիկներից մեկը ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայությանը եւ հաշվառվել պահեստազորում, 7 հոգու տրամադրվել է տարկետում, 1-ին

⁹ <http://www.arlis.am/>



կրթությունը շարունակելու հիմքով, իսկ մյուս 6-ին՝ առողջական վիճակից ելնելով, որոնցից.

- 3 հոգուն՝ 6 ամսով: Նրանցից 2-ը իրավական աջակցություն ստանալու ընթացքում տարկետում էին ստանում առաջին անգամ և հետագայում (տարկետման ժամկետը լրանալուց հետո) կազմակերպությանը չեն դիմել՝ իրավական աջակցության նպատակով: Մյուս գորակոչիկը, որին 2014 թ. հունվարին տրամադրվել էր տարկետում 6 ամսով, այնուհետև ճանաչվել է պիտանի և գորակոչվել զինծառայության: Վերջինս ծառայության է անցել ՀՀ ՁՈւ գորամասերից մեկում և դրանից հետո չի դիմել կազմակերպությանը:
- 1 հոգու տրամադրվել է տարկետում 5 ամսով 2014 թ. հունվարին, իսկ 2014թ. հունիսին տրամադրվել է տարկետում ևս 10 ամսով: 2 դեպքում էլ կազմակերպությունը գորակոչիկին տրամադրել է իրավական աջակցություն:
- 1 հոգու տրամադրվել է տարկետում 1 տարով՝ 2014 թ. հուլիսին:
- 1 հոգու տրամադրվել է տարկետում 10 ամսով 2014 թ. հուլիսին: Նախկինում նրան տրամադրվել է տարկետում ևս 2 անգամ (2012թ. աշնանային գորակոչին՝ 1 տարով, 2013-2014թթ. ձմեռային գորակոչին՝ 6 ամսով): Կազմակերպությունը գորակոչիկը դիմել է 2014 թ-ի ամառային գորակոչի ընթացքում:

Զինվորական ծառայության անցած գորակոչիկներից 2-ը ունենալով առողջական խնդիրներ, զինվորական ծառայության մեծ մասն անց են կացնում կամ անց են կացրել զինվորական հոսպիտալներում: Կազմակերպությունը ծնողների դիմումների հիման վրա շարունակել է նրանց իրավունքների պաշտպանությունը: Զինվորական ծառայության անցած գորակոչիկներից մեկի ծնողի հավաստմամբ՝ նրանք արդեն հաշտվել են այդ մտքի հետ, որ ոչինչ հնարավոր չէ փոխել՝ չնայած որդու մոտ առկա առողջական խնդիրներին: Բացի այդ, ըստ նրա, նրանք խուսափում են իրենց որդու իրավունքների պաշտպանությունը շարունակել, քանի որ պնդում են, որ հակառակ դեպքում որդին զինծառայության ընթացքում կարող է խնդիրներ ունենալ:



Մեր կողմից առաջարկը դատական կարգով լուծելու համար որպես կանոն մերժվում է ծնողների կողմից՝ հետագա հնարավոր խնդիրներից խուսափելու մտայնություն ունենալու հիմնավորմամբ:

2013 թ-ի ձմեռային 2014 թ-ի ամառային գորակոչերի ընթացքում, վերստին արձանագրվել են գորակոչի կազմակերպման հետ կապված խնդիրներ: Դրանցից առաջինը վերաբերվում է որոշակի ժամանակացույցով գորակոչիկների բժշկական զննության անցկացմանը, որի առկայությամբ հնարավոր է խուսափել երկարատև հերթերից եւ կուտակումներից: Մյուս խնդիրը վերաբերում է գորակոչիկներին բժշկական զննության արդյունքների պատճենների չտրամադրելուն: Այս մասին բազմիցս բարձրաձայնվել է, սակայն «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ զինված ուժերում 2013 թ-ին» զեկույցի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությունը իր մեկնաբանություններում նշում է է. *«Ինչ վերաբերվում է բոլորին բժշկական փաստաթղթերը տրամադրելու հարցին, ապա այս խնդիրը տարածքային զինվորական կոմիսարիատներում կառաջացնի դժվարություններ պատճենահանող սարքեր եւ անհրաժեշտ պարագաներ չունենալու պատճառով»:*

Այսինքն, պաշտպանության նախարարությունը հաստատում է, որ խախտվում է քաղաքացու՝ տվյալ դեպքում գորակոչիկի՝ իր առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքը:¹⁰ Տվյալ պարագայում պատճենահանող սարքեր եւ անհրաժեշտ պարագաներ չունենալը չի կարող որեւէ արդարացում հանդիսանալ, քանի որ հանձնաժողովը կարող է դասական կերպով կազմել եւ տրամադրել ախտորոշման ձեռագիր տարբերակով երկրորդ օրինակը:

Նշենք, որ հետագոտման ակտի պատճենը հիմնական փաստաթուղթն է, որի հիման վրա գորակոչիկը եւ նրա հարազատը հնարավորություն են ունենում հիմնավորել իրենց իրավունքների պաշտպանությանն ուղղված բողոքները եւ դիմումները:

¹⁰ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված

Այս խնդրի լուծման իրավական կարգավորման մասին առաջարկը եւս ներկայացրել ենք ՀՀ ՊՆ եւ ՀՀ ԱԺ Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովին, որը լուծում չի ստացել ՀՀ ՊՆ 410 հրամանով:

Զուգահեռաբար, նշենք, որ այնուամենայնիվ, առողջական վիճակի վերաբերյալ հետազոտման ակտի տրամադրման պրակտիկան որոշակի փոփոխություն է կրել: Եթե նախկինում մշտապես մերժում էին դրանք տրամադրել, այժմ դրանք պահանջի դեպքում տրամադրվում են:

5. Եզրահանգումներ

Ամփոփելով 2013 թ-ի ձմեռային եւ 2014 թ-ի ամառային գորակոչերի ընթացքում կազմակերպության կողմից բացահայտված խնդիրները՝ գտնում ենք, որ ոլորտում շարունակում են չլուծված մնալ համակարգային մի շարք խնդիրներ: Նկատի ունենալով նաեւ նախորդ զեկույցում¹¹ ամրագրված եւ լուծում չստացած խնդիրները, արձանագրում ենք.

Օրենսդրության բնագավառում

1. Բացակայում է շարային եւ սահմանափակումներով ծառայության տեսակները կարգավորող ենթաօրենսդրական ակտը
2. ՀՀ ՊՆ 410 հրամանում հստակ սահմանված չեն մի շարք հիվանդությունների ծանրության աստիճանների չափանիշները
3. Օրենսդրորեն չի կարգավորվում գորակոչիկի մոտ մի քանի հիվանդության զուգակցման պարագայում պարտադիր զինվորական ծառայության պիտանիության խնդրի լուծման կարգը

¹¹ http://hcav.am/wp-content/uploads/2013/11/%D4%B6%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%B9_2013_%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf

4. 2013 թ-ի ամառային զորակոչի ընթացքում կիրառվել է իրավական ուժ չունեցող փաստաթուղթ
5. Ջորակոչի կազմակերպման ընթացքում բժշկական զննության եզրակացության ակտի բողոքարկման մեխանիզմի բացակայության պատճառով առողջական խնդիրներով անձինք զորակոչվում են զինվորական ծառայության
6. Հանրապետական բուժզննության անցնելու տրանսպորտային ծախսերը չեն փոխհատուցվում բավարար չափով

Օրենսդրության կիրառման բնագավառում

1. Ջորակոչի ընթացքում չի ապահովվում զորակոչիկների պարտադիր համալիր բժշկական հետազոտության իրականացումը՝ օրենքով նախատեսված ամբողջ ծավալով, ինչպես նախկին զորակոչների ընթացքում¹²
2. Մեկ կամ մի քանի անգամ տարկետում ստացած զորակոչիկները միեւնույն հիվանդությունների առկայության դեպքում հաջորդ զորակոչին առանց հիմնավորման եւ առանց առողջական վիճակի բարելավման զորակոչվում են զինծառայության
3. Չի գնահատվում զինծառայությանը բնորոշ ծանրաբեռնվածության պայմաններում առողջական վիճակի հնարավոր զարգացումները
4. Ջորակոչիկներին զինծառայությունից ազատելու փոխարեն տրամադրվում է օրենքով սահմանված չափից ավելի տարկետումներ:
5. Ջորակոչիկների կրկնակի բուժզննությունների իրականացումը շատ հաճախ կրում է ձեւական բնույթ:
6. Սահմանափակումներով ծառայության համար պիտանի ճանաչված զինծառայողները ընդգրկվում են շարային ծառայության մեջ

¹²

http://hcav.am/wp-content/uploads/2012/12/%D5%80%D5%94%D4%B1%D5%8E_%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_%D5%A1%D5%BC%D5%B8%D5%B2%D5%B%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_2012.pdf
http://hcav.am/wp-content/uploads/2009/07/hay_pop.pdf
http://hcav.am/wp-content/uploads/2010/04/Joint-report_Final-2.pdf

7. Շարունակվում է գորակոչիկներին բժշկական զննության արդյունքների եզրակացության չտրամադրման արատավոր պրակտիկան՝ չնայած այն հանգամանքին, որ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված է անձի այդ իրավունքը¹³
8. Զորակոչիկների խնդիրների կապակցությամբ գրությունների պատասխանները որոշ դեպքերում ստացվում են օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ, հետեւաբար չի պահպանվում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները: Կան դեպքեր, երբ գրությանն ընդհանրապես պատասխան չի տրամադրվում /տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ 1/

6. Առաջարկություններ

1. Ըստ առողջական խնդիրների զինվորական ծառայությանը գորակոչիկների պիտանիության կարգը սահմանել օրենքով
2. Մինչ համապատասխան օրենքի ընդունումը ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 410 հրամանում կատարել հետեւյալ փոփոխությունները
 - Հստակեցնել հիվանդությունների ցանկում նշված հիվանդությունների սահմանումը՝ ըստ նրանց աստիճանների
 - Ամրագրել գորակոչիկին նրա առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական զննության եզրակացության մասին ակտի պարտադիր տրամադրումը՝ անկախ նրա դիմումի առկայությանը
 - Սահմանել գորակոչիկի մոտ մի քանի հիվանդությունների զուգակցմամբ զինծառայությանը նրա պիտանիության որոշման կարգը
 - Զորակոչիկի առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական եզրակացության ակտում որպես պարտադիր պայման ներառել

¹³Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

զինվորական ծառայությանը բնորոշ ծանրաբեռնվածության պայմաններում նրա առողջական վիճակի հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումների գրառումը եւ դրանց վատթարացումը կանխարգելող ցուցումները

3. Օրենսդրորեն սահմանել բժշկական ակտի բողոքարկման մեխանիզմը
4. Ապահովել զորակոչիկների եւ զինծառայողների պարտադիր համալիր բժշկական զննությունը՝ անկախ գանգատների առկայությունից
5. Զորակոչիկների բուժզննության վերաբերյալ ախտորոշումը համապատասխանեցնել առողջության իրական վիճակին
6. Ապահովել սահմանափակումներով ծառայությանը պիտանի ճանաչված զինծառայողների ներգրավումը բացառող, կանխարգելող անկախ վերահսկողական մեխանիզմ: